

II

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Մարտ 30-ին, Թիֆլիսում, սրտի կաթլածից մեռել է յայտնի երաժշտագէտ Ռոմանոս Մելիքեանը :

Հանգուցեալը Հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքից էր : Ուսել էր Նոր-Նախիջևեանի թեմական դպրոցում : Երաժշտական կրթութիւնը աւարտել էր Պետերբուրգում : Երգի ու երաժշտութեան դասատու էր Թիֆլիսի հայոց դպրոցներում : Ոչ այնքան հասարակական համոզումներով, որքան ընկերական համակրանքներով մօտ էր հայ սոցիալ - դէմոկրատների հետ . Մասնաւորապէս բարեկամական կապեր ունէր հայ բոլշեւիկներից շատերի հետ : Այդ պատճառով, երբ Հայաստանը դարձաւ խորհրդային, նա կանչեց Երեւան եւ մասնակցեց երաժշտանոցի հիմնադրութեան : Եղաւ նրա գործօն ուժերից եւ առհասարակ կարեւոր տեղ դրաւեց Հայաստանի երաժշտագէտների շարքում : Մասնակցեց պետական Օպերայի հիմնադրութեան :

Կրթական - դաստիարակչական գործից աւելի Ռ. Մելիքեանը յայտնի է իր երաժշտական աշխատութիւններով . դասագիրք, ձայնադրութիւն, բաղմաթիւ երգերի հեղինակութիւն : Սակայն, նրա ստեղծագործութիւնը յատկանշող եւ երգահանի համբաւը ժողովրդականացնող գլխաւոր գործը ռոմանսներն են : Երաժշտական ստեղծագործութեան այս ձեւը նրանից առաջ շատ քիչ էր զարգացած Հայաստանում . առաջին անգամ Ռոմանոսը լրջօրէն զբաղւեց հայերէն ռոմանսով և յօրինեց այնքան՝ զեղեցիկ երգեր : Նրա ռոմանսները սանտիմենտալ ու թախծոտ՝ երգւում են այսօր Երեւանից սկսած մինչեւ Քալիֆորնիա ու Բուէնոս Այրէս, հայաբնակ բոլոր վայրերում :

Մելիքեանի առաջին տպւած գործը «Աշնան Երգեր» ռոմանսն է, որ լոյս տեսաւ 1907 թ. «Գեղարեւոտ» հանդիսում : Մրան յաջորդեցին «Անջատում»-ը, «Վայրի Ծաղիկը», «Ուռնի»-ին մեղմ ու տիւրը, տէրեանական տրամադրութիւններով համակւած երգեր : Բայց նրա գլուխ գործոց «Զմրուխտի» երգերի շարքն է - ութը երգ - որ իր խորքով ու ոճով, ի յուզական ապրումներով խորապէս աղլւած է հայ ժողովրդական ստեղծագործութիւնից :

Ռ. Մելիքեանը ունի եւ ապսպրանքով շինւած, յաւուր պատշաճի բոլշեւիկեան երգեր, բայց դրանք յաջողութիւն չունեցան : Աւելին . նա մի ժամանակ խորհրդային քննադատութեան կազմից խիստ յարձակումների ենթարկւեց իր՝ կոմունիստական վարդապետութեան

անհարագատ արտայայտութիւններէ համար, սակայն, այդ յարձակումները առանձին անդրադարձում չունեցան նրա դիրքի վրա: Ընդհանուր առմամբ նա կարողացաւ պահել ստեղծագործութեան անկախութիւնը:

Ռ. Մելիքեանը, ի հարկէ, արտակարգ տաղանդ չէր, իբրեւ երգահան, ոչ էլ երաժշտութեան տեսարան էր, կամ բացառիկ կարողութեան տէր ուսուցիչ ու խմբավար, բայց եւ այնպէս նա կարեւոր ոյժ էր: Նա մեռաւ այն տարիքին, - ծնւել էր 1883-ին, երբ դեռ շատ բան կարող էր տալ հայկական երաժշտութեան: Ռ. Մելիքեանի անունը կենդանի կը մնայ Երեւանի երաժշտանոցի պատմութեան մէջ, իսկ լայն հասարակութիւնը նրան կը յիշէ իբրեւ սրտի դիպչող, յուզիչ ուժանասների հեղինակ:

